ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
06.06.2019Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 11 անդամները:

Բացակայում են Ա.Փանոսյանը, Գ.Երիցյանը, Մ.Պողոսյանը, Մ.Գասպարյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղարի Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը , գյուղերի վարչական ղեկավարները:
Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 15-ի թիվ 13 որոշման հավելվածի 15-րդ կետն ուժ կորցրած ճանաչելու մասին:
5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները ուղղակի վաճառքի եղանակով և աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին;
6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ք.Չարենցավան 4-րդ թաղամաս 10-րդ շենք թիվ 4 ոչ բնակելի տարածքը աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
7. Չարենցավանի համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Զարենցավան համայնքի Արզական գյուղի Ն. Զարյան փողոցի 19 տան բնակիչ ***Վարդգես Հովհաննիսյանի*** 2019 թվականի ապրիլի 16-ի թիվ 1162-16, դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝***առաջարկում եմ*** .Զարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Վարդգես Հովհաննիսյանին:***

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2.Զարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով , քաղ. ճարտ.,գյուղ. և բնակկոմ. տնտես. բաժնի պետ Բ. Բալբաբյանի 04.06.2019թ թիվ 1762/04, 17.05.2019թ թիվ 1762/04,22.05.2019թ թիվ 1597/04, ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ Գ.Աֆյանի 31.05.2019թ թիվ 1701/04, զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Ա.Ծերունյանի զեկուցագրերը ***առաջարկում եմ*** կատարել լրացումներ և փոփոխություններ 2019 թվականի հաստատված բյուջեում:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Կողմ-10 **դեմ - 0** **ձեռնպահ -1**

Վարդանյան Նորիկ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3.Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օգտագործելու համաձայնություն տալու մասին:

/Զեկ. Վ.Չիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 77-րդ հոդվածով, ***առաջարկում եմ*** տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալներին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումի.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Հրանուշ Թավաքալյան	3-2-13	2 142 509	Սեփականություն	Անհատույց

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 11 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. ***Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 15-ի թիվ 13 որոշման հավելվածի 15-րդ կետն ուժ կորցրած ճանաչելու մասին:***

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝***առաջարկում եմ*** ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի մարտի15-ի «Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին» թիվ 13 որոշման հավելվածի 15-րդ կետը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5.Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները ուղղակի վաճառքի եղանակով և աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին;

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ***առաջարկում եմ*** թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները ուղղակի վաճառքի եղանակով և աճուրդային կարգով օտարելու համաձայն հավելվածի:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ - 0** **ձեռնպահ -1**

Վարդանյան Նորիկ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6.Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ք.Չարենցավան 4-րդ թաղամաս 10-րդ շենք թիվ 4 ոչ բնակելի տարածքը աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ–1** **ձեռնպահ-0**

Վարդանյան Նորիկ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7.***Չարենցավանի համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:***

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Հաշվի առնելով քաղաքային մարզադաշտի վերականգնման անհրաժեշտությունը և դրա նշանակությունը համայնքում մարզական կյանքի, բնակիչների հանգստի կազմակերպման խնդրում, ինչպես նաև համայնքային բյուջեի սուղ միջոցները, առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ 1-ին մասի կետով.***առաջարկում եմ*** .Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ, քաղաք Չարենցավան Գայի փողոց, թիվ 6 հասցեում գտնվող հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար օգտագործվող 3.8հա ընդհանուր մակերեսով հողամասը՝ ներառյալ մարզադաշտը և 3617.2 քառ.մ ընդհանուր մակերեսով մարզադահլիճը՝ շենք շինություններով (հանդերձարաններ և տրիբունաներ), այսուհետ՝ Անշարժ գույք) 25 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Վան» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Առանց համայնքի ավագանու համաձայնության չի թույլատրվում անշարժ գույքը փոխանցել 3-րդ անձի, տալ վարձակալության կամ օգտագործման, ինչպես նաև իրականացնել քաղաքաշինական գործունեություն:Սահմանել «Վան» ֆուտբոլային ակումբի պարտավորությունները՝ հանձայն հավելվածի:Սահմանել, որ օգտագործման իրավունքի տրամադրման հետ կապված պետական գրանցման ծախսերը կատարվում են օգտագործողի միջոցների հաշվին:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Վալերի	**Եփրեմյան Տարոն**
Բաբայան Նարեկ	**Վարդանյան Նորայր**
Գրիգորյան Հակոբ	**Վարդանյան Սարգիս**
Գասպարյան Անատոլի	**Սահակյան Երեմ**
Դավթյան Կարեն	**Վարդանյան Նորիկ**
Խլղաթյան Արսեն	

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**